Դեսպան Յամադան ներկա է գտնվել Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի 10-րդ տարելիցին նվիրված միջոցառմանը Սպիտակում

Մարտի 11-ին՝ Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժից 10 տարի անց, դեսպան Յամադան ներկա է գտնվել Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողությանը Սպիտակ քաղաքում՝ 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնում: Սպիտակում 2012 թ.-ին տեղի կամավորների նախաձեռնությամբ տեղադրվել է Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերին նվիրված խաչքար: Այդ ժամանակից ի վեր ամեն տարի մարտի 11-ին անցկացվում է ոգեկոչման արարողություն:

Արարողությանը ներկա էին դեսպան Յամադան, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ պարոն Փամբուխչյանը, արքեպիսկոպոս Հակոբյանը, Լոռու մարզպետի տեղակալ պարոն Ասրյանը, Սպիտակի քաղաքապետ պարոն Սահակյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնատար անձինք, այդ թվում՝ փրկարար ծառայության տնօրեն գնդապետ Գասպարյանը, Լոռու մարզի փրկարար ծառայության անդամները, ինչպես նաև Սպիտակ քաղաքի մի շարք քաղաքացիներ: Արարողության ընթացքում մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի և Սպիտակի երկրաշարժի զոհերին նվիրված խաչքարերին՝ աղոթելով զոհերի համար:

Դեսպան Յամադան աղետների կանխարգելման ոլորտում համագործակցության վերաբերյալ մտքեր փոխանակեց նախարարի առաջին տեղակալ պարոն Փամբուխչյանի և այլ մասնակիցների հետ:

Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժին նվիրված հուշարձան

Դեսպան Յամադայի ողջույնի խոսքը

Նախարարի առաջին տեղակալ պարոն Փամբուխչյանի ողջույնի խոսքը

Արքեպիսկոպոս Հակոբյանի ողջույնի խոսքը

Դեսպան Յամադայի երաժշտական կատարումը՝ նվիրված զոհերին

Դեսպան Յամադան և նախարարի առաջին տեղակալ պարոն Փամբուխչյանը ծաղկեպսակ են դնում հուշարձանին

Լոռու մարզային փրկարարական վարչության պետ գնդապետ Գաբրիելյանը և Սպիտակի քաղաքացիները ծաղիկներ են խոնարհում

1988թ.-ի Սպիտակի երկրաշարժին նվիրված հուշարձան

Դեսպան Յամադան, արքեպիսկոպոս Հակոբյանը և փրկարար ծառայության անդամները

Դեսպան Յամադան, քաղաքապետ Սահակյանը և Սպիտակի քաղաքացիները